

«ՆԱՅԻՐԻ»

Ն Ի Ս Ի Մ Է Ջ Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Փ Ո թ Ո Ր Ի Կ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՉՈԼԻՆԿԻՐԵԱՆ
{ՎՐԷԺ ՌՈՒՔԷՆԵԱՆ}

Մենք, սկզբունքով՝ սովորութիւն չունինք համայնքային հարցերու շուրջ արտայայտուելու:

Որովհետեւ Սփիւռքի մէջ, ամէն համայնք իրեն յատուկ հարցեր, իրեն վերաբող ցաւեր ունի...:

Իրականութեան մէջ, Նիսի մեր համայնքէն ներս, փոթորիկի ազդանշանները 25 տարիներ առաջ սկսան յայտնուիլ: Յետոյ, օրէ օր, անոնք անլի ուժեղացան:

Եւ ներկայի փոթորիկին վերածուեցան:

Եւ հիմա կը տեսնենք, որ Նիսի հայ համայնքէն ներս ստեղծուած փոթորիկը, Ազգային խնդրի փոխակերպուած է:

... Իրականութեան մէջ, ի՞նչ է եղածը:

Մենք, 1976-թ.էն ի վեր, վերջնականապէս Նիս կը բնակինք:

Եւ հոն, մեր կեցութեան առաջին տարիներուն, մասնակցեցանք Նիսի համայնքային աշխատանքներուն:

Եւ 1980-թ.ին, Նիսի Հայ Առաքելական եկեղեցիի Թաղական Խորհուրդին մէջ, չորս տարի գանձապահի պաշտօն վարեցինք:

Այդ տարիներուն Նիսի և շրջակայքի հոգեւոր հովիւն էր՝ Տարօն Ծ. Վրդ. Ճէրէնեանը:

Շատ հայրենասէր և մեր ճանչցած պերճախօս կրօնականներէն մէկը:

Չորս տարի պաշտօնավարելէ յետոյ, թաղական խորհուրդին բոլոր անդամները հրաժարեցան, որ իրենց տեղ նոր տարրեր գործի անցնին...:

Եւ Հայր Տարօն ինք նշանակեց ապագայ թաղական Խորհուրդի անդամները...: Բոլորն ալ՝ հազիւ 30 տարեկան: Գրեթէ բոլորն ալ՝ Պոլսեցի երիտասարդներ:

... Հայր Տարօն կը պաշտպանէր իր ընտրել տուած թաղականները, և անոնց դէմ ուղղուած դոյզն քննադատութեան անգամ կը հակադէր ըսելով. «Մի՛ դպչիք իմ թաղականներուս»:

... Անհաւատայի է... բայց, մէկ քանի տարիներ յետոյ, այս «Երիտասարդ» թաղականները, Նիս-ի մէջ, «Աատատիրութիւն» մը ստեղծեցին...:

Եւ բոլորովին ինքնագլուխ դարձան ու Հայր Տարօնը անտեսեցին:

Եւ Նիս-ի մէջ, Պոլսահայ մտայնութեամբ, «Փոքր Պոլիս» մը մէջտեղ բերին:

Որովհետև այս «Պոլսեցի թաղականները» իսկական հայկական ոգի չունեին: Պոլսոյ հետ իրենց կապը չէին խզած:

Եւ մէկ ոտքերնին Պոլիս էր: Կալուածներ ունէին այնտեղ:

Ահա, այդ օրերէն մէկուն է, որ սկսաւ պառակտումը Նիս-ի մեր համայնքէն, ներս:..

Այս թրջամէտ Պոլսեցի հայերուն մտայնութեան դէմ եղող հայերը հեռացան եկեղեցիէն... Եւ «եկեղեցին պարպուեցաւ»:

Բայց այս վիճակը թրջամէտ թաղականներուն համար կարեւոր հարց մը չէր: Թերեւս ալ՝ աւելի լաւ էր իրենց համար: Քանի որ, բոլորովին ազատ մնացին իրենց գործունէութեան մէջ:

Ըստ կանոնագրութեան, չորս տարին անգամ մը (իբր թէ) Թաղականական ընտրութիւններ կը կատարէին, նոր Խորհուրդի կազմութեան համար, Նիսի մէջ... մի միայն իրենց շրջանակի մարդոցմով և իրենց ձեռք ձգած փոխանորդագրերով (Procurator)... Եւ, իբր թէ, օրինաւոր ընտրութիւն կը կատարէին:

Բայց, ամէն ատեն, հայկական ոգի չունեցող, անկէ զուրկ՝ նոյն թրջասէր կամ թրջամէտ մտայնութեան ծառայող թաղականներ, աւելի ճիշդ՝ կամակատարներ կ'ընտրուէին... ընդհանրապէս՝ տկար նկարագրի տէր և «Աթոռի հիւանդ»ներ էին ատենք:

Ընտրութիւն ըստածն ալ կը վերածուէր ձեւակերպութեան, «Խամաճիկներու թատրոն»ի:

Որովհետև վարագոյրին ետեւէն այս խամաճիկներուն թելերը քաշողները, միշտ ու յարատեւ՝ Հայր Տարօնը յուսախար ընող Պոլսեցի նախկին թաղականներն էին:

Եւ «Թաղականական ընտրութիւն» ըստած այս զաւեշտը, 1989-էն մինչեւ 2010 թուականը, նոյն ձեւով ու 25 տարիներ ամբողջ շարունակուեցաւ:

Եւ այս Պոլսեցի թաղականները, Նիսի մեր համայնքի վարչութեան մէջ Dynastie մը, տեսակ մը իշխանական կառոյց ստեղծած էին:

Ասոնց զաւակները և ազգականները հերթաբար պաշտօնի կը կոչուէին: Եւ իրենց պէս չմտածողները կը հեռացնէին...: Եւ անոնց ընտրութեան իրատունը չէին տար, զանազան պատրուակներով:

Եւ այս Dynastie-ին, իշխանական այս տոհմին, ըսենք նաեւ՝ «Քլառ»ին, թրջասէր տոհմին այս իշխանութիւնը դեռ երկար, տառնամեակներ կրնար շարունակուիլ... Եթէ «Հրաշք» մը չկատարուէր:

... Եւ այդ հրաշքը կատարուեցաւ... թէւ երեսոյթը մեր՝ Հայաստանի համար լաւ չէ, նոյնիսկ՝ վնասաբեր:

Բայց նաեւ՝ իրականութիւն է...:

Ապրուստի դժուարութիւններու պատճառաւ Հայաստանի հայերը արտասահման կը խուժեն...:

Մանաւանդ՝ Ռուսաստան: Բայց ամենէն ցաւալին՝ կը գաղթեն դէպի Թուրքիա:

... ու նաեւ՝ Եւրոպա...:

Եւ նկատելով, որ Պոլսկարիան և նման երկիրներ այսօր Եւրոպայի մաս կը կազմեն... այս երկիրներու հայերը շատ անելի դիրութեամբ ֆրանսա ալ եկան:

Եւ այսօր, Նիս-ի հայ համայնքէն ներս, վերջին շրջաններուն հոն եկած 200 հայ ընտանիքներ հաստատուած են:

Ահա, այս էր, Նիս-ի մէջ կատարուող հրաշքը:

Ահա, այս երկու հարիւր հայ ընտանիքը կործանեցին Նիս-ի թրքամէտ կառոյցը:

Իսկ թրքաւեր տարրը, իշխանութիւնը չկորսնցնելու վախով, այս նորեկ հայաստանցիները իբր «Հայ» ջընդունեց: Եւ քնականաբար՝ իբր հայ

<p>Culte</p> <p>Nice : "Du riffi dans la communauté arménienne"</p> <p>L'altercation entre anciens et nouveaux venus autour de l'Eglise arménienne n'en fait pas de faire des vagues... Jusqu'à France 3!</p> <p>FRANCE ARMENIE 16 Juin 2010</p>
<p>Nice</p> <p>La communauté arménienne sous haute tension</p> <p>NICE MATIN 22 Juin 2010</p>
<p>DOSSIER/Nice</p> <p>AU-DELA DE LA TOURMENTE</p> <p>En exclusivité, monseigneur Norvan Zakarian, primat du diocèse de l'Eglise apostolique arménienne de France, prend position sur la crise de Nice et les questions qu'elle a suscitées.</p> <p>NOUVELLES D'ARMENIE 2 juillet 2010</p>
<p>ՎԱՏ ԲԵՄԱԴՐՈՒԹԻՒՆ</p> <p>ՆԻՍԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ</p> <p>ԵԿԵՂԵՑԻՈՅ ԾՈՅԸ</p> <p>Գործը շարունակվում է 4 հունիս 2010</p>
<p>ՆԻՍԸ</p> <p>ՑԱԻԱՏԱՆՁ</p> <p>Գործը շարունակվում է 9 հունիս 2010</p>
<p>ՆԻՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՓՈԹՈՐԻԿՅՆ</p> <p>Գործը շարունակվում է 6 հուլիս 2010</p>

Նաեւ՝ «Մարտի»

Եւրոպայի կառույց

հայերու արտաքին

զանոնք չարձանագրեց, ու թոյլ չտուաւ որ անոնք ընտրութեամբ մասնակցին...:

Ահա՛, ասոնք են, ֆրանսայի հայկական մամուլին, ֆրանսական թերթերուն և հեռատեսիլէն Նիս-ի հայ համայնքին մասին տրուած շոնդալից լուրերն և տեղեկութիւնները, որոնք այս թրջասէր խմբաւորումին վերջին անարդար գործունէութիւններուն արձագանգները կը կազմեն:

* * *

Իրականութեան մէջ, Նիս-ի այս թրջասէր հաւաքականութիւնը ինչո՞ւ այնքան կառչած է տեղւոյն մեր եկեղեցիին ու թաղականութեան:

Այս մասին մեր գիտցածները ներկայացնել-բացատրելու ջանանք:

Նախ ըսենք, որ Նիս-ը և իր շրջակայքը իրենց շատ նպաստաւոր կլիմային, առաւելութեանց պատճառաւ, տարեց հարուստներուն կողմէ կեցութեան նախընտրուած վայրեր են:

Ահա՛, թէ ինչու և ինչպէս, տարեց հայեր ալ կ'ապրին Նիս-ի շրջակայքը, և ասոնցմէ անոնք որ ժառանգորդ չեն ունեցած, իրենց ունեցածը, շատ անգամ, հայկական եկեղեցիին կտակած են:

Մենք, իբր տարեց և Նիսի եկեղեցիին ու նաեւ Հ.Բ.Ը.Մ.ին ծառայած անձ գիտենք, թէ այս ժառանգութիւնները երբեմն, խարդախ հայերու կողմէ ինչպէս կը շահագործուին: Կտակներու գրառումը ինչպէս կը կատարուի:

Յաւելուած՝ Նիս-ի հայկական եկեղեցին, սա վերջին տարիներուն, ուրիշ առաւելութիւն մը ունեցաւ:

1988-թ.ին Նիս-ի եկեղեցիին քովի հողամասը գնուեցաւ հայկական եկեղեցիին կողմէ: Եւ այդ հողամասին վրայ, մասնաւորապէս լոնտոնաբնակ, նախկին Սուտանահայ՝ Պարսամեան ընտանիքի բարերարութեամբ ու նաեւ Նիս-ի համայն հայերու ալ նպաստով, համալիր մը կառուցուեցաւ:

Այս համալիրին գոյութիւնը կը պարտինք Տարօն Ծ. Վարդապետ Ճէրէճեանին, որ Լոնտոն իբր հովիւ պաշտօնավարած շրջանին, ծանօթացած էր Պարսամեան ընտանիքին: Եւ ասոնց թելադրած ու համոզած, որ Նիս-ի մէջ համալիրի մը կառուցման նպաստեն:

[Երանի՛, թէ Հայր Տարօն, Նիս-ի տեղ Հայաստանի մէջ համալիր մը կառուցել թելադրած ըլլար Պարսամեան ընտանիքին]:

Այս համալիրին բացումը 1988-թ.ին կատարուեցաւ, և բնականաբար՝ գլխաւոր նուիրատուին՝ Պարսամեանի անունը տրուեցաւ կառոյցին: (→էջ 8)

ՆԻՍԻ ՄԷՋ ՀԱՅԿԱԿԱՆ ՓՈԹՈՐԻԿ... (Օտար. էջ 2-էն)

Քիչ յետոյ, համալիրը մատակարարելու հեռանկարով, Պարսամեան ընտանիքը մեծ գումար մը յատկացուց և այս դրամով հիմնարկ մը ստեղծուեցաւ:

Եւ անոր պատասխանատու նշանակուեցաւ թրքասէր խմբաւորումին պետը, որ շարունակեց մնալ Նիս-ի եկեղեցոյ թաղական Խորհուրդի Ատենապետ...:

Եւ մենք կը հաւատանք, որ Նիս-ի հայ համայնքին վերջին խլրտումներուն րուն պատճառը, Պարսամեան համալիրին տէր դառնալ ուզող թրքամէտներուն գլխաւորներուն մեքենայութիւններն են:

Քանի որ Նիս-ի թաղական Խորհուրդին իբր անդամ ծառայած մեր տարիներէն գիտենք, թէ տեղւոյն հայկական եկեղեցին, ինչպէս նաեւ Ֆրանսայի բոլոր հայ եկեղեցիներուն կանոնագիրներուն մէջ գրուած է. «Եթէ Նիս-ի մէջ հայ համայնքը գոյութիւն ունենալէ դադրի, եկեղեցիին կառոյցը և բոլոր եկեղեցական կալուածներուն վերջնական սեփականատէրը պիտի ըլլայ Էջմիածնի Մայր եկեղեցին, Մայր Աթոռը»:

Եւ հիմա, Ֆրանսայի Հայաստանեայց Առաքելական եկեղեցոյ թեմին Առաջնորդ՝ Նորվան Արք. Զաքարեանին առժամեայ պաշտօնավարութեան համար Նիս ուղարկած Մեսրոպ Արեղայ Պարսամեանին վկայութեամբ և հետեւողութեամբ ըսենք...-

Նիս-ի եկեղեցիին Մայր Կանոնագիրը այս թրքասէր, տեսակ մը ցեղապետատիրական իշխանութեան շրջանի [1984-2010] 26 տարիներու ընթացքին, Կանոնագրութեան բովանդակած 56 կէտերուն մէջ փոփոխութիւններ կատարուած են:

Իսկ ամենէն կարեւորը՝ «Նիսի եկեղեցիին բոլոր կառոյցները ի վերջոյ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եկեղեցիին կը պատկանին» հատուածը՝ բոլորովին ջնջուած է:

Նորվան Արք. Զաքարեան, Ֆրանսայի մէջ, Հայաստանեայց եկեղեցիին յատուկ կանոնագրութիւն մը պատրաստելու համար, սա վերջին տարիներուն քանի, քանի՛ անգամ Նիս եկաւ տեղւոյն այս [իբր թէ] թաղականները հանդգելու, որ ընդունին Ֆրանսահայ թեմին նոր կանոնագրութիւնը:

Ֆրանսայի բոլոր, Մայր Աթոռի թեմին ենթակայ Հայաստանեայց եկեղե-

ցիները (թիւով՝ 18 հատ), նույնութեամբ ընդունած էին սո՞ն՛ կանոնադրութիւնը:

Միայն այս՝ Նիսի թաղականները զայն մերժած էին, չէին ընդունած:

Եւ ժողովուրդին մէջ լուր տարածած էին անոնք թէ՛ «Էջմիածինը մեր հարստութիւնները ձեռք ձգել կ'ուզէ»:

Եւ Նորվան Սրբազան ստիպուեցաւ շատ մը փոփոխութիւններ մտցնել կազմական կանոնագրի նախագիծին մէջ, գոհացնելու համար այս թրջամէտները, և որպէսզի ու վերջապէս՝ Ֆրանսայի մէջ հայկական ինքնուրոյն թեմ մը ստեղծուի:

**

Նիսի թրջամէտ թաղականներուն հայկականութեան չափանիշը որոշել և բացատրելու համար, ատենի Մարսէլյի Մայր եկեղեցիի հոգեւոր հովիւ՝ Զատիկ Վարդապետ Աւետիքեանին մեզի պատմածները պիտի ջանանք հոս մէջբերել ու նշել:

«2006-թ-ին, Նորվան Սրբազանին հրահանգով Նիս գացի որ թաղական Խորհուրդի անդամներուն հետ խորհրդակցինք կանոնագրին նախագիծին մասին: Պարսամեան սրահ հաւաքուած էինք: Ներկայ էին նաեւ, Նիս-ի Հայկ. գաղութէն բաւական թիւով հայրենակիցներ ալ:

Ժողովապետը նիստին բացումը կատարեց:

Անոր ըսի, իր նկատողութեանը տալով, թէ՛ ժողովին նպատակը տեղւոյն Հայ եկեղեցիին կանոնագրութեան նախագիծի քննարկումն է, ուստի լաւ կ'ըլլայ, որ աղօթքով, գոնէ «Հայր Մեր»ով սկսինք խորհրդակցութեան:

Ժողովին Ատենապետը պատասխանեց, թէ՛ «Այս դպրոցը աշխարհական (Laique) դպրոց մըն է: Որով ժողովը աղօթքով սկսելու իրաւունք չունիք»:

Եւ արգելք եղաւ մեր աշխատանքին աղօթքով բացումին:

Հակառակ ասոր, սկսայ «Հայ Մեր» աղօթել, և ներկայ ժողովականներն ալ ալ ոտքի ելան հետեւելով ինծի: Հակառակ արգելքին՝ միասնաբար աղօթեցինք:

Յետոյ, ժողովին օրինական կարգով ընթացումը խանգարել ուզողը ըսաւ ինծի թէ՛ «Ես այս տեղի պատասխանատուին տուած հրահանգը գործադրեցի»:

Հրահանգը տուողը՝ թրջամէտ խմբաւորումին պետն եղած է:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶՈՒԼՆԿԻՐԵԱՆ
{ՎՐԷԺ ՌՈՒՔԷՆԵԱՆ}

Երեքշաբթի 25 Մայիս 2010